վարել հայկական դատը, քան թէ վարել են, չէին կրնար երբեք ուեւ բարիք, աղատութիւն բերել հայ ժողովուրդին, որ անոնց բոլոր ծրագիրներն ու ստորագրած դաշնագիրները անխուսափելիօրէն, ճակատագրօրէն պէտք է վիժէին եւ որ միմիայն բանուոր դասակարգը ի վիճակի էր հայոց բազմաչարչար դատը լուծելու:

Եւ «լուծեց»...

Այսպէս կը գրէ պատմութիւնը հայ մարքսիստներէն ամենէն հայը, անաչառութեան ծիրանի հագած հայոց պատմագիրը, ինքը փիլիսոփայ, Դաւիթ Անանուն:

(Շարունակելի)

ՀԻՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՑՔԸ

Գրեց՝ ՊՐՈՖ. Ն. ԱԴՈՆՑ

IV

Հին դասական գրականութեան մէջ Շամիրամին բախտակից է Նինոսը:

Գրեթէ բոլոր հին հեղինակները, որոնք հետաքրքրուել են արեւելեան պատմութեամբ, յիշում են Նինոս-Շամիրամեան զրոյցն այս կամ այն չափով: Նրանց սկզբնական աղբիւրն է Կտեսիասը: Սա պարսից Արտաշէս թագաւորի դրան բժիշկն էր (395) եւ մօտիկ ծանօթ էր ժամանակակից ժողովրդական զրոյցներին: Գրի է առել ի մէջի այլոց եւ Շամիրամի եւ Նինոսի վերաբերեալ զրուցախառն պատմութիւնը, բայց նրա երկը մեզ չի հասել: Նրանից օգտուել են հետագայ պատմագիրները, քաղելով կարեւոր կտորներ, որոնց միջոցով կարելի է վերականգնել կորած բնագիրը: Առանձնապէս յարգի են Դեոդոր Սիկիլիացու քաղուածները, որոնք այսպէս են ներկայացնում Շամիրամի առասպելը:

Շամիրամը Ասորիքի Ասկալոն քաղաքի Դերկետ աստուածուհու դուստրն էր: Քաղաքից ոչ հեռու կար մի մեծ եւ խոր լիճ, լի ձկներով: Սրա ափին էր գտնուում հռչակաւոր տաճարը, նուիրուած աստուածուհուն, «որին ասորիները անուանում էին Դերկետո եւ որի դէմքը կնոջ նման էր, իսկ մնացեալ մասը՝ ձկան»:

Դերկետոյի մասին առասպելաբանում էին, որ Աֆրոդիտէին վիրաւորած լինելով, պատժւում է վերջնիս կողմից նորանով, որ սիրահարւում է մի երիտասարդի եւ նրանից ունենում է մի աղջիկ երեխայ: Դերկետոն ամօթահար ձգում է մանկան մի քարոտ եւ անապատ տեղ, եւ ինքը յուսահատ ընկնում է լիճը եւ դառնում ձուկ: Այս պատճառով ասորացիք ցարդ ձուկ չեն ուտում եւ աստուծոյ տեղ են պաշտում:

Ընկեցիկ երեխային շրջապատում են աղաւնիները, սնում եւ խնամում են նրան: Որը թեւերով պաշտպանում է քնքոյշ մարմինը, որը հարեւան հովիւներից կաթնեղէն է բերում եւ կերակրում: Հովիւներից մէկը պատահմամբ նկատում է երեխային, վերցնում տալիս է արքունի ախոռապետին, որի անունով կոչւում է Սեմիրամիս, որ ասորական բարբառով նշանակում է աղաւնի: Այդ ժամանակից ասորիները սկսում են պաշտել աղաւնուն իբր աստուծոյ:

Աղջիկն արդէն չափահաս էր, երբ միանդամ Նինոս թագաւորի մերձաւորներից մէկը, այցի գալով ախոռապետին, տեսնում է աղջկան եւ զմայլում նրա գեղեցկութեամբ: Նրա անունն էր Օնն(էս), թագաւորի առաջին խորհրդականը եւ Ասորիքի հրամանատարը: Սա խնդրում է ախոռապետին եւ նրա համաձայնութեամբ առնում է Շամիրամին կնութեան: Այս զոյգից ծնւում է երկու զաւակ՝ Հիւպատ(էս) եւ Հիւդասպ(էս):

Նինոս թագաւորը, արշաւելով Բակտրիայի վերայ, տանում է հետը նաեւ Օննին: Պատերազմը երկարում է, Օննը ստիպուած է բերել տալ իր կնոջը Շամիրամին: Սա ճանապարհ է ընկնում ամուսնու մօտ, տղայի շոր հագած, որ չիմանան, թէ նա կին է: Բանակ հասնելով՝